ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

ք. Երևան «14» հուլիսի 2022 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 10-Ա[1]

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի պետի (ծածկագիր՝ 18-1-28.3-Ղ4-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունը և Լուսինե Մարտիրոսյանի անձնական դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ.

1. Լուսինե Մարտիրոսյանին 2022 թվականի հուլիսի 15-ից ազատել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպչի (ծածկագիր՝ 18-1-28.3-Մ3-1) քաղաքացիական ծառայության պաշտոնից և նշանակել նույն բաժնի պետի (ծածկագիր՝ 18-1-28.3-Ղ4-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնում:

2. Լ. Մարտիրոսյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լ. ՖԱՐՄԱՆՅԱՆ